

# «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

14.06.2016 12:00



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Անվճար իրավաբանական խորհրդատվություն**» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի **հուլիս ամսվա** փուլին մասնակցելու համար հայտարարվում է **փաստաբանների մրցույթ**:

**Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).**

ա) **անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում (բաղադրիչ 1),**

բ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում (բաղադրիչ 2),**

գ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին (բաղադրիչ 3)**

## **Բաղադրիչ 1.**

**Հուլիս ամսվա ընթացքում Կոտայքի և Սյունիքի մարզեր** այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Կոտայքի և Սյունիքի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար (4-րդ և 5-րդ խմբեր):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից, Կոտայքի և Սյունիքի մարզերից:**

## **Բաղադրիչ 2.**

**Հուլիս ամսվա ընթացքում «Աբովյան» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկներ** այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 6 փաստաբաններ** ընտրելու համար՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Կոտայքի և Սյունիքի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար (4-րդ և 5-րդ խմբեր):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից, Կոտայքի և Սյունիքի մարզերից:**

## **Բաղադրիչ 3.**

**Հուլիս ամսվա ընթացքում** վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար (3-րդ խումբ):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **վարչաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով Ձեր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն լեզուներով՝ այն ուղարկելով [info@advocates.am](mailto:info@advocates.am) կամ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com) էլեկտրոնային հասցեներին:

Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չեն փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:

Դիմում-հայտում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը և մարզը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի հունիսի 24-ը:

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են ծրագրում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ:

**Ծրագրի համակարգող՝**

**Լյուդվիկ Դավթյան**

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

Հեռ.՝ 091 066 880, 098 828 098

Էլ. փոստ՝ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com)

## Առաջարկվող նորություններ



**19.04.2016** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵԱՀԿ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



**17.05.2016** «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



**14.07.2016** «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



**13.09.2016** «ԱՆՎԾԱՐ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»  
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ  
ԾՐԱԳԻՐ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```